

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի ՆՏ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ
ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԹԻՎ 37 ԸՆՏՐԱՏԱ-
ՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՆԱԶՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 11-Ի
ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՄԱՆ ՆԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 հունիսի 2012թ.

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի,
Ա. Խաչատրյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի, Ա. Պեպրոսյանի, Վ. Պո-
ղոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝

դիմող կողմի՝ Նայասրանի Նանրապետության Ազգային ժողովի մեծա-
մասնական ընտրակարգով թիվ 37 ընտրապարաձքում պարզամավորի թեկնածու
Ս. Նարությունյանի,

գործով որպես պարասխանող կողմ ներգրավված՝ թիվ 37 ընտրապարաձքային
ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ թիվ 37 ընտրապարաձքային
ընտրական հանձնաժողովի նախագահ Ա. Սրեփանյանի եւ ՆՏ կենտրոնական
ընտրական հանձնաժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ
Ն. Նովհաննիսյանի,

համաձայն Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ
հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական
դատարանի մասին» Նայասրանի Նանրապետության օրենքի 25 եւ 74-րդ հոդ-
վածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի մայիսի 6-ի ՏՏ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 31-Ա որոշման հետ կապված վեճի վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նայասրանի Նանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 37 ընտրատարածքում պատգամավորի թեկնածու Ս. Նարոյությունյանի՝ 16.05.2012թ. ՏՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ 2012թ. մայիսի 21-ի աշխատակարգային նիստում քննարկելով վերոհիշյալ դիմումը, որոշում է կայացրել՝ համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ, 5-րդ մասերի, 74-րդ հոդվածի 4-րդ մասի՝ գործն ընդունել քննության եւ գործով որպես պատասխանող կողմ ներգրավել թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին: Նշված որոշմամբ գործով զեկուցող է նշանակվել ՏՏ սահմանադրական դատարանի անդամ Վ. Պողոսյանը:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, հետազոտելով դիմումը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասրանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Նայասրանի Նանրապետության Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2012 թվականի մայիսի 6-ին՝ Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 68-րդ հոդվածում նախատեսված ժամկետում: Ընտրությունների կազմակերպման եւ անցկացման նպատակով Նայասրանի Նանրապետության ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կազմավորվել է թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Ընտրատարածքը ներառում է թվով 77 ընտրական տեղամաս:

Թիվ 37 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով գրանցվել ու քվեաթերթիկներում ընդգրկվել են Ազգային ժողովի պատգամավորի 4 /չորս/ թեկնածու: Ըստ թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընտրատարածքում ընտրությունների արդյունքների վերաբերյալ արձանագրության՝ ընտրողների ընդհանուր թիվը 53949 է, իսկ ընտրություններին մասնակցել է 35741 ընտրող: Թեկնածուների օգտին տրված ձայների թիվը 34398 է, որը բաշխվել է

հետևյալ կերպ. Ն. Գրիգորյան՝ 19894, Թ. Նակոբյան՝ 11822, Ս. Նարությունյան՝ 1492, Վ. Վարդազարյան՝ 1190: Անճշտությունների թիվը կազմել է 25:

Թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012թ. մայիսի 11-ի թիվ 31-Ա որոշումով թիվ 37 ընտրատարածքից Նայասպանի Նանրապետության Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրված պարզամավոր է ճանաչվել առավել կողմ ձայներ ստացած Ն. Գրիգորյանը:

2. Դիմողը գտնում է, որ անհրաժեշտ է անվավեր ճանաչել թիվ 37 ընտրատարածքում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պարզամավոր ընտրվելու մասին թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 31-Ա որոշումը:

Դիմողի պնդմամբ՝ թիվ 37 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պարզամավորի թեկնածու Թաթուլ Երվանդի Նակոբյանի գրանցումն անօրինական է, քանի որ նա օրենքով սահմանված կարգով վերջին հինգ տարում Նայասպանի Նանրապետությունում մշտապես չի բնակվել: Սույն փաստի առնչությամբ դիմողը նախ երկու անգամ դիմել է ՆՏ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչություն՝ նույն վարչության Երեւան քաղաքի Նոր Նորքի բաժանմունքի կողմից Թ. Նակոբյանին տրված՝ վերջին հինգ տարում ՆՏ-ում մշտապես բնակվելու մասին փեղեկանքն անվավեր ճանաչելու խնդրանքով: Դիմումները մերժվել են: Նույն պահանջով դիմողը դիմել է նաեւ ՆՏ վարչական դատարան: Վերջինս իր՝ 02.04.2012թ. որոշմամբ հայցադիմումի ընդունումը մերժել է: Դիմողն այնուհետեւ նոր հայցապահանջ է ներկայացրել ՆՏ վարչական դատարան: ՆՏ վարչական դատարանը՝ հինգ դատավորի կազմով, որպես երրորդ անձ ներգրավելով Թաթուլ Նակոբյանին, քննության է առել հայցադիմումը եւ իր՝ 06.04.2012թ. որոշմամբ մերժել է Ս. Նարությունյանի՝ թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի՝ իր դիմումը մերժելու մասին 01.04.2012թ. եւ Թաթուլ Նակոբյանին որպես ԱԺ պարզամավորի թեկնածու գրանցելու վերաբերյալ որոշումներն անվավեր ճանաչելու հայցադիմումը: Վարչական դատարանը գտել է, որ հայցն անհիմն է, եւ դիմողի կողմից վիճարկվում է ոչ թե Թ. Նակոբյանի ՆՏ-ում մշտապես բնակվելու վերաբերյալ փեղեկանքի փորձան ուղղված գործողությունը, այլ այդ փեղեկանքի առկայության պայմաններում թիվ 37 ԸԸՆ-ի կողմից թեկնածուին գրանցելու փաստը: Դիմողը գտնում է, որ վարչական դատարանն ապօրինի որոշում է կայացրել՝ մերժելով իր հայցադիմումը:

Ըստ դիմողի՝ ընտրողների անձնագրերում դրված դրոշմակնիքների ժամանակից շուր անհետանալը նպաստել է ՏՏ-ից բացակայող քաղաքացիների փոխարեն քվեարկություն կազմակերպելուն:

Դիմողը նշում է նաև, որ ընտրությունների նախապարաստման եւ անցկացման ընթացքում տեղի են ունեցել ՏՏ ընտրական օրենսգրքի տարաբնույթ խախտումներ, որոնք, իր կարծիքով, ազդել են ընտրափորձքում ընտրությունների արդյունքների վրա եւ գրնում է, որ քվեարկության արդյունքներն իրենց մեջ պարունակող պարկերում առկա են ի վնաս իրեն կատարված օրինախախտումները հաստատող բազում իրեղեն ապացույցներ: Ըստ դիմողի՝ ընտրությունների արդյունքների վրա ամենաեական ազդեցությունն է ունեցել այն իրողությունը, որ քվեարկության ընթացքում իր օգտին տրված ձայների մեծ մասը հաշվարկվել է ՏՏԿ թեկնածու Նայկ Գրիգորյանի, Թաթուլ Նակոբյանի, անգամ «Նայ ազգային կոնգրես» կուսակցությունների դաշինքի թեկնածու Վարազդար Վարդազարյանի օգտին:

3. Պատասխանող կողմը գրնում է, որ թիվ 37 ընտրափորձքում քվեարկության արդյունքներով ընդունված որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմողի պահանջն անհիմն է, քանի որ թիվ 37 ընտրափորձքում ՏՏ ԱԺ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների ընթացքում տեղի չեն ունեցել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ հանձնաժողովի կողմից այլ որոշում կայացնելու համար: Ի պատասխան դիմողի ներկայացրած հարցադրումների՝ պատասխանողը նշում է, որ քաղաքացի Թ. Նակոբյանի կողմից ներկայացվել են ՏՏ ընտրական օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ լիազոր մարմնի տեղեկանքը՝ վերջին հինգ տարում Նայասրանի Նանրապետությունում մշտապես բնակվելու մասին: Ավելին, ՏՏ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության պետի գրությամբ եւս մեկ անգամ փաստվել է, որ վարչական մարմնի կողմից կրկին անգամ ուսումնասիրվել են քաղաքացի Թաթուլ Նակոբյանին տեղեկանք տրամադրելու համար հիմք հանդիսացած փաստական հանգամանքները եւ վերջին հինգ տարում Նայասրանի Նանրապետությունում մշտապես բնակվելու մասին օրենքով սահմանված պահանջը չբավարարող տվյալներ չեն հայտնաբերվել:

Ընտրական ցուցակներում ընդգրկված ընտրողների թվի առնչությամբ պատասխանողը նշում է, որ ՏՏ ընտրական օրենսգրքի վերլուծությունից բխում է, որ ընտրական իրավունք ունեցող ՏՏ այն քաղաքացիները, ովքեր բացակայում են

Նայաստանի Նանրապետությունից՝ անկախ ՆՏ ժամանելու հաճախականությունից կարող էին եւ պետք է ընդգրկված լինեին ընտրողների ցուցակներում: Դա պայմանավորված է ՆՏ քաղաքացու ընտրական իրավունքի իրացման հնարավորությամբ: Իսկ ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ հիշյալ անձանց փոխարեն քվեարկություն է տեղի ունեցել, ապա պարասխանողը գտնում է, որ այդ պնդումն անհիմն է, քանի որ դիմողը չի ներկայացրել որեւէ դեպք այլ անձի փոխարեն քվեարկություն կատարելու առնչությամբ:

Անձը հաստատող փաստաթղթերի վրա դրվող դրոշմակնիքների առնչությամբ պարասխանողը նշում է, որ դրոշմակնիքի արագ անհետանալու փաստը չի կարող ազդեցություն ունենալ քվեարկության արդյունքների վրա, քանզի թանաքի կիրառումն ընդամենը լրացուցիչ, սակայն ոչ միակ միջոցն է կրկնակի քվեարկությունը բացառելու համար: Ավելին, ԸԸՆ որեւէ դիմում-բողոք չի ներկայացվել եւ ՏԸՆ-ների գրանցամատյաններում չկան գրառումներ ընտրական տեղամասերում կրկնակի քվեարկության դեպքերի մասին:

Դիմողի կողմից մարնանշված ընտրասխանագրուների տարբեր դեպքերի առնչությամբ պարասխանողը գտնում է, որ դրանք ընդհանուր հարցադրումներ են, եւ դիմողը որեւէ կոնկրետ փաստով դրանց հիմնավորումներ չի ներկայացնում: Միակ օրինակը, որ բերում է դիմողը թիվ 37/37 ընտրատեղամասի վերաբերյալ, չնայած տվյալների աղբյուրի անհայտ լինելուն, դարձյալ վկայում է, որ դիմողի ներկայացրած տվյալների եւ պաշտոնական արդյունքների միջեւ որեւէ տարբերություն առկա չէ տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի եւ հաղթող ճանաչված թեկնածուին տրված ձայների միջեւ:

Ինչ վերաբերում է քվեարկության արդյունքներին, ապա պարասխանողը գտնում է, որ դիմողը դրանք չի բողոքարկել կամ դրանց վերահաշվարկի որեւէ պահանջ ընտրատարածքային ընտրական հանձնաժողով չի ներկայացրել, իսկ դիմումում ներկայացվող դատողություններն անհիմն են ու չփաստարկված:

4. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի առաջին հիմնական փաստարկը վերաբերում է Թաթուլ Նակոբյանին թիվ 37 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով ՆՏ Ազգային ժողովի պարզամավորի թեկնածու գրանցելու վերաբերյալ թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 01.04.2012թ. թիվ 21-Ա որոշման ենթադրյալ անօրինականությանը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2012թ. մայիսի 31-ի ՍԴՌ-1028 որոշման մեջ, անդրադառնալով թեկնածուների գրանցման շուրջ ծագած վեճերին եւ վերջիններիս առնչությամբ ՆՏ սահմանադրական դատարանի ու ՆՏ վարչական դատարանի իրավագործությունների փարանջապարհի խնդրին, վերահասարակելով իր՝ ՍԴՌ-433, ՍԴՌ-703 եւ ՍԴՌ-736 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, ամրագրել է, որ «...բոլոր այն հարցերը, որոնք առնչվում են ընտրությունների ժամանակ թեկնածուների գրանցման շուրջ առաջացած վեճերին, որոնց լուծումն օրենքով սահմանված կարգով վերապահված է ՆՏ վարչական դատարանին, սահմանադրական դատարանում առանձին քննության առարկա չեն կարող հանդիսանալ, իսկ որպես ապացուցողական հիմք ընդունվում են վարչական դատարանի վերջնական ակտերը»: Դա բխում է ՆՏ Սահմանադրության 5 եւ 100-րդ հոդվածների պահանջներից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի կողմից թիվ 37 ընտրաքարտի ընտրական հանձնաժողովի վերոհիշյալ 01.04.2012թ. թիվ 21-Ա որոշումը վիճարկվել է ՆՏ վարչական դատարանում: Նշված որոշումն անվավեր ճանաչելու՝ դիմողի պահանջը մերժվել է ՆՏ վարչական դատարանի 2012թ. ապրիլի 6-ի վերջնական որոշմամբ: Միաժամանակ, ՆՏ վարչական դատարանն իր որոշման մեջ որպես գրանցման հետ կապված խնդրո առարկա վեճում դիմողի իրավունքների պաշտպանության պարզաճ միջոց է մարմնանշել ՆՏ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության Երեւան քաղաքի Նոր Նորքի բաժնի գործողության վիճարկումը վարչական դատարանում, ինչը դիմողը չի իրացրել:

Բոլոր դեպքերում, համաձայն ՆՏ Սահմանադրության 5 եւ 100-րդ հոդվածների, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 25-րդ հոդվածի, ՆՏ ընտրական օրենսգրքի 46 եւ 118-րդ հոդվածների, ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 145 եւ 150-րդ հոդվածների՝ ՆՏ սահմանադրական դատարանն իրավասու չէ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճի շրջանակներում քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը, որոնց լուծման իրավասությամբ օրենքով սահմանված կարգով օժտված է ՆՏ վարչական դատարանը, եւ որի որոշումներն այդ հարցերով վերջնական են ու վերանայման ենթակա չեն, կամ գնահատել վարչական դատարանի դատական ակտի իրավաչափությունը:

Ինչ վերաբերում է սահմանադրական դատարանին ուղղված՝ դիմողի միջնորդությանը՝ լրացուցիչ ապացույցների ձեռքբերման նպատակով համապատասխան հանձնախմբեր ձեւավորելու առնչությամբ, ապա սահմանադրական դատարանն

արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի, 74-րդ հոդվածի 8-րդ մասի հիման վրա համապարասխան հանձնախմբեր կարող են ձևավորվել **նախ**` միայն սահմանադրական դատարանի իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ ապացույցներ ձեռք բերելու նպատակով, **երկրորդ**` երբ ակնհայտ փաստարկվում է, որ արգելափակվել են դիմողի կամ նրա վստահված անձանց իրավունքները կոնկրետ վերահսկողական գործողություն իրականացնելիս, եւ նման հանգամանքը հաշվի չի առնվել ընտրության արդյունքներն ամփոփելու ժամանակ: Դիմողը դատարանին նման փաստարկներ ու հիմնավորումներ չի ներկայացրել:

5. Սահմանադրական դատարանն իր` 2007թ. հունիսի 10-ի ՍԴՌ-703 որոշման մեջ արտահայտել է հետեւյալ իրավական դիրքորոշումը. «...եթե դիմող կողմն ընտրությունների նախապարաստման, անցկացման եւ արդյունքների ամփոփման գործընթացով պայմանավորված ընտրական հանձնաժողովների, իրավասու այլ մարմինների որոշումները, գործողությունները կամ անգործությունը մինչեւ սահմանադրական դատարան դիմելը ՏՏ ընտրական օրենսգրքով եւ իրավական այլ ակտերով նախատեսված` արտադարական (վարչական) կամ դատական կարգով չի բողոքարկվել, այսինքն` օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով եւ ժամկետներում չի օգտագործել (սպառել) իր ընտրական իրավունքների պաշտպանության` օրենքով նախատեսված բոլոր միջոցները, ապա լիարժեք չեն դառնում սահմանադրական դատարանում ընտրությունների արդյունքներով քննվող հանրային-իրավական վեճի շրջանակներում ապացուցողական նշանակություն ունեցող փաստեր ներկայացնելու եւ դրանցով իր փաստարկները հիմնավորելու նրա դատավարական հնարավորությունները»: Նշված իրավական դիրքորոշմանը համապարասխան գնահատելով դիմողի ներկայացրած մյուս բոլոր փաստարկները` սահմանադրական դատարանն արձանագրում է.

առաջին` դիմողի առանձին պնդումներ վերաբերում են նախընտրական քարոզչության կազմակերպման ընթացքում օրենքի պահանջների ենթադրյալ խախտումներին: Այդ խախտումների առնչությամբ, սակայն, դիմողն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում իրավասու մարմիններին համապարասխան դիմում չի ներկայացրել եւ ՏՏ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով քննության առարկա չի դարձրել,

երկրորդ՝ դիմողի պնդմամբ ընտրախախտումներ են տեղի ունեցել նաև քվեարկության փուլում: Վերոհիշյալ իրավական դիրքորոշմանը համապատասխան՝ նշված ենթադրյալ խախտումների վերաբերյալ պնդումները սահմանադրական դատարանում կարող էին ապացուցողական նշանակություն ստանալ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգով եւ ժամկետներում դիմողի ընտրական իրավունքների պաշտպանության համապատասխան միջոցների օգտագործման արդյունքում ձեռք բերված նյութերով: Մինչդեռ դիմողը որեւէ տեղամասի առնչությամբ չի ներկայացրել քվեարկության արդյունքների վերահաշվարկի կամ տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջ: Այս փաստը հաշվի առնելով՝ սահմանադրական դատարանն անհիմն ու ժամանակավրեպ է համարում նաև դիմողի միջնորդությունը դիմումում թվարկված թվով 40 եւ մյուս /այսինքն՝ բոլոր/ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է ընտրողների ցուցակներում Նայաստանի Նանրապետությունից բացակայող քաղաքացիների ընդգրկման՝ դիմողի կողմից առաջադրված խնդրին, ապա դրա վերաբերյալ իր մտպետումներն ու իրավական դիրքորոշումները սահմանադրական դատարանն արտահայտել է իր՝ 2012թ. մայիսի 31-ի ՍԴՌ-1028 որոշման մեջ:

6. Գործի նյութերի համադրված վերլուծությունը վկայում է, որ սույն գործի բնորոշ առանձնահատկություններն ամփոփ ձևով հանգում են հետևյալներին:

Առաջին՝ դիմողը, ՆՆ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրության արդյունքներով թիվ 37 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշման հետ կապված վեճի շրջանակներում, բողոքարկում է ոչ թե մեծամասնական ընտրակարգով ՆՆ Ազգային ժողովի պատգամավոր ընտրված, այլ ընտրողների ձայների թվով երկրորդ տեղն զբաղեցնող թեկնածուի՝ որպես այդպիսին գրանցման իրավաչափության հարցը: Բացի նրանից, որ, ինչպես նշվեց, օրենքով սահմանված կարգով թեկնածուների գրանցման վեճերը քննվում եւ վերջնական լուծում են ստանում ՆՆ վարչական դատարանում, նաև ակներե է, որ պասիվ ընտրական իրավունքի իրացման առումով եթե նույնիսկ քվեարկության արդյունքներով երկրորդ տեղն զբաղեցրած թեկնածուի օգտին տրված ձայներն ամբողջությամբ գումարվեին դիմողի օգտին տրված ձայներին, միեւնույն է՝ այն 6580 ձայնով կամ 33.1 տոկոսով պակաս կլինեք ընտրված ճանաչված թեկնածուի օգտին տրված ձայներից:

Երկրորդ՝ դիմողն ընդհանուր դժգոհություն արտահայտող դափողություններից բացի դատական քննության համար անհրաժեշտ ապացուցողական նշանակություն ունեցող որեւէ փաստարկ չի ներկայացնում քվեարկության արդյունքների ոչ հավասարի լինելու հիմքով իր պասիվ ընտրական իրավունքի խախտումը հիմնավորելու վերաբերյալ, ինչը պարտավոր կլինէր հաշվի առնել ընտրաարածքային ընտրական հանձնաժողովը վեճի առարկա որոշումն ընդունելիս: Դիմողը ՆՏ ընտրական օրենսգրքով ընձեռված որեւէ վերահսկողական իրավասություն սահմանված կարգով չի իրացրել՝ փաստելու համար քվեարկության արդյունքների հետ կապված այնպիսի իրավախախտումներ, որոնք ազդել են իր ընտրական իրավունքի իրացման վրա: Դիմողը գլխավորապես հենվում է փարաբնույթ դափողությունների ու կարծիքների, այլ ոչ թե ապացուցողական նշանակություն ունեցող կոնկրետ փաստերի վրա, ինչը դատական գործընթացում ընդունելի չէ:

Երրորդ՝ դիմողը չի ներկայացնում այնպիսի կոնկրետ փաստեր, որոնք հիմնավոր ձեռով վկայեին իր կամ իր վստահված անձանց իրավունքների ոտնահարման մասին՝ փեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկի կամ դրանք անվավեր ճանաչելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով քայլեր իրականացնելիս: Այդ պարճառով էլ, ինչպես նշվեց, իրավական հիմքից զուրկ է դիմողի միջնորդությունը՝ բացառապես բոլոր ընտրական փեղամասերում սահմանադրական դատարանի կողմից վերահաշվարկներ կատարելու առնչությամբ: ՆՏ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի համաձայն՝ դիմողն անձամբ եւ իր վստահված անձինք ժամանակին ու օրենքով սահմանված կարգով նման պահանջ կարող էին ներկայացնել ու իրականացնել ցանկացած ընտրական փեղամասի վերաբերյալ, ինչը, ըստ գործի նյութերի, չի արվել: Ուստի քվեարկության արդյունքների ոչ հավասարիության պարզապես վկայակոչմամբ ընտրաարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը վիճարկելն իրավական առումով դառնում է չփաստարկված, իսկ նման ձեռով նոր վերահաշվարկի պահանջի առաջադրումը դուրս է գալիս նաեւ սահմանադրաիրավական վեճի շրջանակներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով ՆՏ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 63, 64 եւ 74-րդ հոդվածներով, Նայասարանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. «Թիվ 37 ընտրափորձում Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պարզամավոր ընտրվելու մասին» թիվ 37 ընտրափորձային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի մայիսի 11-ի թիվ 31-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Նայասրանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5 հունիսի 2012 թվականի
ՍԴՈ- 1029